Սարո
Հարությունյան
Խաղիկներ

Ուրացում (disclaimer)

Հարգելիդ իմ ընթերցող, սույն տաղերն ընթերցելիս դու ականատես կլինես բազում ուղղագրական սխալների, և հնարավոր է, որ փորձես փնովել ինձ դրանց համար։ Այդ առթիվ շտապեմ տեղեկացնել, որ ես քաջ գիտեմ բոլոր բառերի իմաստներն ու ուղղագրությունը, և որ բոլոր նկատված սխալները արված են այս կամ այն նպատակով՝ խաղիկին համապատասխան ոգի տալու համար։

Նշեմ նաև, որ սույն տաղերը բաժանվում են երկու հիմնական դասերի՝ բարեխառն (ոչինչ) և զավզակություններ։ Ընթերցողն ինքը ի զորու է տաղը կարդալուց հետո համապատասխան որակումը տալ նրան։

Ֆայլի վերնագրի հեղինակ՝ Էրեջ Երևանցի (Արեգ Արմենի Մելքումյան)։

Կազմին՝ «Տհեարեёյի երազը», հեղինակ՝ Էրեջ Երևանցի։

Ֆիզմաթում

Պախմել (խմուկ)

Տարոնի գլուխն է ցավում (Բաղալյան),

Ու նաև սիրտն է խառնում։

Կարո՞ղ եք արդյոք գուշակել,

Թե երեկ նա ինչ է արել։

Երեկ, երբ մենակ էր մնացել

Տարոնը իրար էր խառնել

Կոնյակն ու գինին, ու խմել

Երկու-երկու շիշ ու հարբել։

Էնքան էր նա խմել անհագ,

Որ ընկել էր պախմելի տակ։

Ու ինքն էսօր փոշմանել էր,

Որ դասի եկել նստել էր։

Հիմա նստել էր տրտնջում,

Ո՛չ զարթնում էր, ո՛չ էլ քնում։

x.02-03.2017

Խմուկ

Տարոնի գլուխը ցավում էր,

Ու խետն էլ սիրտը խառնուկ էր։

Կարա՞ս գյա դու գուշակես,

Թե հերեգ ինչ էր արե։

Հերեգ մենակ էր մացել,

Մե իրար էր խառնվե,

Կոնյակ-պիվեն խառնեց հիրար

Հերգ-հերգու շիշ ու հառփեց։

Գյա էս գյադեն էնքան խմեց,

Վերջ հնցավ պախմելի տակ։

Ու էսօր հինքը փոշմանուկ,

Եկել դասի նստուկ։

Հիմա նստուկ տրտնջուկ էր,

Ոչ զարթնուկ էր, ոչ էլ քնուկ։

(Թարգմանիչ՝ Տարոն Պիծակ)

Չիչիի քիթը[1]

Եթե ձեզ երբևէ հարցնեն

Թե ով է կամ ինչ է Չիչին,

Ապա ոչ ոք չի պատասխանի

Հարցին այդ՝ թվացող չնչին։

Դուք զոռ կտայիք ձեր ուղեղին՝

Չգտնելով օգնող ոչինչ,

Ու այդպես էլ կմնայիք,

Եթե ձեզ չկանգնեցնեին։

Չիչին դա մի բան է, որին

Դժվար է դիտարկել, քանզի

Գոյություն ունի մի արգելք,

Որը նրա քիթն է ինքնին։

Շատ գիտնականներ են տանջվել

Լուծելու համար այդ քթի

Հարցերը, որ շատանում են

Ահռելի թափով օր օրի։

Ու դա պռոբլեմ է այսօր

[1] Վերնագրի հեղինակ՝ Էրիկ Բաբայան։

Ու սպառնալիք ողջ տիեզերքին,

Նոբելյան մրցանակ ա, որ

Կտրվի քիթ վերացնողին։

Արս, ինչի՞ ես էսքան թարս

Արսենը մեր դասարանի

Խայտաբղետ ժողովրդի

Միջից մաթեմատիկայի

Խնդիր լուծողն ա սիրելի։

Բայց երբ իրան դու հարկադրես,

Որ քո համար խնդիր լուծի,

Դժվար թե իրան համոզես,

Որ խնդրի վրա մտածի։

09.03.2017

Էռոջայնեօ

Երբ ես նոր էի ուսմունքս դրել,

Ավելի շուտ հըլը չէի էլ դրել,

Ես ունեի գեթ մի աշակերտ,

Էռոջայնեօն իմաստակերտ։

Երկրորդ թաղի այգին գնում

Նստում էի ու քարոզում

Ավտոմոբիլագիտություն

Էռոջայնեօյին անուսում։

Բայց ինքը գնաց կործանվեց,

Ճահիճն ընկավ քլաշ ռոյալի,

Ընկավ ու խթվավ ու խրվեց

Ընենց, որ էլ դուրս չհելնի։

Ու հիմա նա մեջն է տիղմի,

Ինձի իսկի չի էլ լսում,

Որ ասում եմ ես էդ խաղի

Տիրու նանն եմ ես քրֆում։

09.03.2017



Էրեջ Ա Իմաստուն, պատկերված խլեզի տեսքով, ինչպես նրան նկարագրում էր Կուրդինյան Բիլորը, Ֆիզմաթ հատուկ դեբիլների դպրոց[2]

Պդավիթ

Պդավիանոսն ու ֆիզիկան

Կործանեցին մեր ապագան։

Կարագուլյանին

Հիմա ժամն է ֆիզիկի,

Ու մեկը նոր հարց տվեց։

Տարոնն ելավ, որ գրի

Խնդիրը, որ հարցվեց։

Ու մինչդեռ նա քայլում էր

Դեպի գրատախտակը,

Իմ մտքին այցելեց մեր

Հին ու բարի դմակը։

04.04.2017

---

[2] «Ֆիզմաթ հատուկ դեբիլների դպրոց» արտահայտությունը պատկանում է մեր մաթեմատիկայի ուսուցիչ Վարդանյան Վարդանին

Գազով թան

Արսենն մի անգամ
Դրեց համոզեց,
Ու գազով թանը
Նա ինձ խմցրեց։
Ու ինձ դուր եկավ
Էդ գազով թանը,
Ու ինձ դզեց էդ
Ջերմուկ-մածունը։

Կոտրվածք

Արեգն ուներ մի հեռախոս՝
Սամսունգ գալաքսի յոթ դուռս։
Հեռախոսի ներսը ճաքեց
Ու Արեգը դրեց ծախեց։
Բայց էկրանը լոկ չճաքեց,
Արեգի սիրտը փշրվեց։

Էդո vs Էրեջ

Էրեջինյոն պլանշետով
Դասարանի անկյունում
Կիսաճապաղված դիրքով
Գյոմետրի դաշ էր խաղում։
Ես նրա կողքն էի նստել
Ու խաղին էի հետևում,
Չհասցրի նկատել,
Ոնց էր Էդոն մոտ քայլում։
Ու նա՝ երբ հասավ մեզ մոտ
Չոփեց Էրեջինյոյին,
Էրեջինյոն էլ ցասկոտ
Հետապնդեց Էդոյին։
Բայց ախր ես ո՞նց չասեմ,
Որ էդրանից առաջ
Էդոն արտաբերել էր
Հուսակոտոր մի բառաչ։
Ախր էս Էրեջինյոն
Տվել էր ու ջարդել էր
Էդոյի եղած-չեղածն
Ու վայն էլ հանել էր//
//ու շատ լավ էլ արել էր։

25.04.2017

Էրեջը և Էդիկը բնական միջավայրում

Ռուշանյան

Ընկեր Ռուշանյանն անընդհատ
Ասում էր «ձիբիլեա սիձյատ»։

Արսենին

Տիեզերքում ճախրում է մի
Կենսաթրթիռ պատանյակ,
Եվ կրում է նա հագին
Սպասածելսկի մի օղակ։

Ընթանում է ճախրանքով,
Թևեր է առել քանզի,
Ոչ թե ռեդբուլ ըմպելով,
Այլ մոգական խմիչքի

Ումպերից փրփրագեղ,
Բարեհամ, անմահական,
Որը կոչվում է համեղ,
Ապարանի գազով թան։

Մեր ասպետն ունի ձեռքին
Խուրձ գովասանագրերի,
Իսկ մյուս ձեռքում առանձին
Տրցակ շտեմարանների,

Որոնք սակայն մաշվել են,
Նիհարել ու բարակել,
Քանի որ նրանք շատ են
Տիրոջ կողմից կրծոտվել։

Սակայն նեղ է մեր փամփլիկ
Անցորդի համար ճամփան,
Չէ՞ որ բոյով է սաստիկ,
Անձուկ է տիեզերքը լայն։

Չնայած իրեն պահել
Ուզում է փոքր-ինչ վսեմ,
Խոսքն այստեղից է ծնվել՝
«Ապե վա՜դ եմ, շատ վա՜դ եմ»։

Դե հապա մի գուշակեք,
Ո՞վ էր մեզ հետ սավառնում,
Ում մասին մենք գործեցինք
Ամբողջ բանաստեղծություն։

14.06.2019

Տիեզերքում

Տիեզերքին

Դու անսկիզբ ու անվերջ տիեզերք,

Դու աստղամած, միգապաղաղ,

Դու անսահման, դու անեզերք,

Ինչու՞ ես դու այդքան չքնաղ։

05.03.2017

Աստղերին

Աստղերը թող վառվեն, վառվեն

Գիշերվա մութ, խոր երկնքում,

Ու զանգվածը այդ լուսեղեն

Թող փարատի խավարն անհուն։

Մեծ ու փոքր, հեռու, թե մոտ

Աստղեր փայլեն կողքին լուսնի,

Որ նրա երեսն ալյուրոտ

Չմատնի, որ ինքն աստղ չի։

29.07.2016, Սալոնիկի

Արեգակին

Երկնային տիեզերական պտտվող հրագունդ՝

Վառվող դարեր հազար ու մի բյուր,

Ծակող ճաճանչներով ինչպես մկունդ

Բայց և հավետ կյանքի աղբյուր։

Լուսասփյուռ արփի ջերմություն տածող,

Դու՝ հավերժ անհաս, դու՝ միշտ առկայծող,

Հեռավոր աստղ՝ գունավառ, լուսաշող,

Պայծառագույնը պայծաառներից

ու անվերջ փայլող։

27.07.2016, Սալոնիկի

Մութ անտառում

Սարսափազդու, սեղըմ մթնում՝

Որտեղ գեթ մի աստղ չի շողում

Խավար գիշերն է թագավորում

Զարհուրելի անտառում։

Չղջիկներն անընդհատ ձայնում,

Բվերն են ընդհատ կռավում,

Գայլը ոռնում, անվերջ ոռնում,

Ու ամենը արձագանքում։

Լուսաբացը չի մոտենում,

Լոկ խավարն է դժգույն տիրում։

Լուսնի շող էլ չի երևում,

Որովհետև միայն սոսկում

Կառաջացներ, քանզի դրսում

Անտառն էին պարուրում

Ժայռեր լերկ, ու կարծես ցասում

Ժայթքող քարեր պաղ ու տրտում։

Վառվեց լուսնի շողն անողոք,

Ցրվեց ամպը լուսնին ծածկող

Լուսավորվեց ժայռի ողորկ,

Խոժոռ բարձունքն ահ տարածող։

Գայլը ոռնաց սրտաճմլիկ,

Ցնցվեց նույնիսկ ժայռն ահազդու,

Էլ չմնաց ոչ մի չղջիկ,

Որ չշտապեց փախչել ահու։

Մի ուրիշ ամպ ծածկեց լուսնին,

Փակեց դեմքը լուսնի դեղին,

Էլ չոռնաց գայլը կրկին,

Կտրեց ձայնը նա լալագին։

26.07.2016, Սալոնիկի

Ժայռեր

Ողորկ ժայռերը հառնել են ահա

Ինչպես տիրակալ մռայլ ու դժնի,

Ու լուռ հսկում են վիհերի վրա,

Կախված իրենց իսկ լերկ պռունկներից։

Տիրապետում են նրանք անդորրին՝

Հնչեղ անդորրին բազումախորհուրդ,

Ու զարհուրեցնում անցնող դարձողին՝

Չբավարարվելով ու անհագուրդ։

Ավտոմոբիլային

Ողբ ի ռեալ ռեյսինգ

Ախր արա տասնմեկ ամիս

Ռեալ ռեյսինգ էի խաղացել ես,

Ամեն անգամ տաս կռուգիս

Ամբողջ կես ժամ էի ծախսել ես։

Ախր էդքան գոնկա էի կպել,

Էդքան ուրախացել ու նեռվայնացել։

Էդքան հոգի էի դրել ամեն գոնկիս մեջ,

Ամեն գոնկեն սրտիս մեջ կրակ էր վառել անշեջ։

Էդքան մաշնա էի առել ես անվերջ,

Բայց արի ու տես, որ էդքան արածս հեչ։

Էդքան սիրելի էր ինձ իմ պորշեն,

Ոչ պակաս նաև իմ առդին։

Դրանք էին պահել ինձ, քանզի ամեն

Տաս կռուգից յոթ ոսկի էր եկել ինձ։

Հրճվել էի էդքան ու ուրախացել,

Թեկուզ մեկ-մեկ էլ քրֆել, քֆրտել։

Սակայն սիրել էի ես վայրկյանն ամեն,

Երբ եղել էի մաշնիս ռուլի վրեն։

Հարուր երկու հատ մաշնա ես ունեի,

Իրեք հազար էլ գոնկա էի կպել,

Ինն հազար ոսկի էլ աշխատել էի,

Հինգ հարուր երեսունհինգն էլ ունեի։

Երեսունն էր զրո ինը տասվեցի,

Դասից հետո Էրեջենց տուն գնացի։

Ջարդեցինք ռեալ ռեյսինգին ընդեղ,

Առանք հարուր հազար ոսկի հյութեղ։

Քսանհինգ մաշնա առա էդ օրը ես,

Քսանհինգ մաշնա պոլնի հզորցրի ես։

Տուն եկա, ու հըլը չէի հասցրել

Նիսսանով մի հատ տաս լափեր անցնել

Մեկ էլ տենամ ինչ.

Սափշենի ռեալ ռեյսինգից,

Որ մինչև տասի տասը տասվեցի

Իմ ամբողջ խաղը կարգելափակվի,

Բայց ըտենց էլ ես չջոգեցի,

Թե ով պալիտ արեց մեզի։

Էրեջինյոյից խորհուրդ հարցրի,

Ասեց՝ խաղը ջնջի, քաշի։

Նույն էդ ձևի էլ ես արեցի,

Բայց չթողեց քաշեմ տվյալներս վաղեմի։

Ու փաստորեն ըդտեղ ես թքեցի,

Աբրածը իմ հին կորավ քանզի։

Ողբամ ես կորած ռեալ ռեյսինգին,

Իմ կորուսյալ, բայց սիրած մաշնեքին։

Բայց ամենից շատ ողբամ թանկագին

Լե Մանսին ու էլ-էմ-պե-մեկերին,

Որ սիրելի էին ինձ ամենից առավել,

Ու սիրելի են ինձ հաստատ հիմա էլ։

Բայց էլ չեմ կարա կառավարեմ ես

Պրոտոթայփներիս, որ պուլիմյոտի պես

Թռնում էին, հենց որ մի հատ փչես,

Սկորոստ էին փոխում հենց աչքդ թարթես։
Ախր իմ անցած հիսունհինգ ու կես
Հազար կիլոմետրի մեծագույն մասն ես
Անցել էի իմ պրոտոթայփներով,
Մուլսանի իրեք հատ պրիմոյներով,
Մինչև էդ՝ Դունլոփի շիկանով,
Հետո՝ Մուլսանի անկյունով,
Ինդիանապոլիս ու Առնաժով,
Պորշեի մոլոր ոլորաններով,
Ու վերջում Ֆորդի զույգ շիկաններով։
Կարճ ասած քսանչորս ժամի կալցոյով։
Բայց էլ չկա էս ամեն ինչը,
Էլ չեմ զգա ես մատոռի շունչը։
02.10.2016

Ողբ ի ասսետտռ կորսա

Վա՜յ, արա՛
Վա՜յ, արա՛
Վա՜յ, արա՛
Շքա՜մ էի տանջվել, արա՛,
Գոնկի վրա Վալլելունգայի,
Շքա՜մ էի տառապել, արա՛,
Կրելու համար գոնկեն էդ մի։
Շքա՜մ կոմպի կնոպկեք սղմել,
Սղմել ու ջարդել էի, արա՛,
Շքա՜մ անգամ կրկին փորձել,
Կրկին փորձել էի, արա՛։
Շքա՜մ հոգնել ու շունչ առել,
Շքա՜մ անգամ նեռվայնացել,
Նեռվայնացել, բայց կանգ չառել,
Առաջ անցել, հետ չնայել։
Ու էդ անգամ ըստացվել էր
Հաջող քշել ու մաններել,
Վերջապես մաշնես հասել էր
Վերջին (գոնկի)՝ առաջինն անարգել։
Հրճվել էի ես, բայց, ավա՜ղ,
Առերես էր հաղթանակն իմ,
Քանզի չարիքը լուռ, խաղաղ,
Տիրապետել էր իմ բախտին։
Քանզի կոմպը կախեց ոխչար՝
Չջոգելով, թե ինչ արեց
Չարչարանքի հետն իմ անծայր
Ու մի հիշատակ չթողեց։
Ու կորավ իմ փառքը անհետ,
Մի վայրկյանում փոշիացվեց,
Սիրտս՝ թունաշաղախ մի նետ
Անսպասելի, խորը խոցեց։

Toyota TS050-ին

Տասվեցին զրո չորսը տասյոթի
Ուլբրլդ էնդուռանլս չեմպիոնշիփի
Տասյոթ թվի սեզոնի առաջին
Մրցարշավը Սիլվերսթոնում անցկացրին։
Տոյոտան չուներ հաղթանակ մինչ էդ

Նախորդ սեզոնի Ֆուջիից ի վեր,

Ու էսօր կորավ վրդովմունքն անհետ

Իրա երեսից՝ դեպի պորշեներ։

Հիմա տոյոտան դարձել ա գազան

Ու ոչ մի պավառոտ չի հանդուրժում,

Իսկ պորշեն այժմ պրիմոյի տառզան՝

Վայրկյանվա կտրում ա այն ու անցնում։

Ոնց կզարգանան դեպքերը տեսնենք,

Էս տարի տոյոտայի հետն ենք։

16.04.2017

Եղանակային

Տարվա եղանակները

Գարնան արևն առատ ու ճոխ
Շողաց վրան երկրի ողջ։
Երգեց սոխակն իր ձայնով ժիր,
Բացեց կակաչը թերթերն իր։
Պարզվեց օրը ու ձգվեց այն,
Ժպտաց, ցնծաց աշխարհն համայն։
Եկան հավքերն տաք հարավից,
Սեր ներշնչվեց վառ գարունից,
Զարթնեց բնությունը նորից։

Արևն հասավ իր զենիթին,
Լսվեց մանկան ձայնը կրկին։
Ամառ տեղաց տեղատարափ,
Հնչեց անձրև հորդ ու առատ։
Խառնվեցին անձրևն արևին,
Ծիածան կապեց երկնակամարին։
Երգեցին դաշտերն պայծառ գույներով,
Ժպտացին ծառերն մրգերի ծովով,
Ամառը անցավ երգով ու պարով։

Ամառը անցավ, աշունը եկավ,
Օրը կրճատվեց, տխրամած դարձավ։
Պարեց տերևը բազմագույն խաղով,
Ընկավ ընկերոջ կողքին շրշյունով։
Լսվեց քամու ձայնն սթափեցնող,
Ելույթ ունեցավ երկինքը մաղով։
Ցամաք գետակը կրկին վարարեց,
Բայց բնությունը տխրեց, թախանձեց։
Աշունն իր տխուր երգը նվագեց։

Դալկությունն է իջել ծառերին,
Ճերմակ սավանն է պատել հանդերին։
Աշունն անցել է, ձմեռն է եկել,
Ու իր հետ բուք ու բորան է բերել։
Ջուրը շենքի տանիքին հոսել
Սառույց է կտրել ու մորուք հյուսել։
Արևը տաք չէ ու չի հուրհրում,
Փողոցում ոչ ոք էլ չի երևում։
Բուքն է զվռնում շեն ու լեռներում։
23.04.2015

Աշուն

Դալուկ դաշտերին իջել է աշուն,
Ջովը ընկնում է, տերևը՝ պարում,
Կանաչը՝ թոշնում, դառնում է անգույն,
Դառնում է գետը նորից կարկաչուն։
28.04.2015

Ձյուն

Ձյուն կուսական՝
Սարերի ձյուն,
Դու անապական,

Սավան դու փայլուն։

Փռվել ես ճերմակ՝

Սար ու ձոր ծածկած,

Լայնարձակ վերմակ

Հետևիցդ ձգած։

Ձյուն 2

Ձյուն է տեղում կրկին դրսում,

Ձյուն է գալիս ձյունի երկրում[3]։

Քանի ժամ է այն անդադրում

Տեղում է ու չի դադարում։

03.04.2022

[3] Ռուսաստանում

Ֆիզտեխում

Լյովին

Եթե անցնես դու Գե-կա-ի միջանցքներով,

Երեկո, թե առավոտ է՝ կապ չունի,

Անշուշտ բազմոցներին դու կնկատես

Ակնոցավոր և մեծ քթով մարդու մի։

Մարդը ո՞րն է, մարդուկի, որ հագին իր

Ունի բաճկոն վանդակավոր, կնգուղով,

Կիպ, սև շալվար, կարճ, սև զույգ գուլպաների,

Ոտքերին կեդեր՝ սպիտակ շրջանակով։

Լյով են կոչում սև ու սպիտակ այդ մարդուն,

Ով բազմոցին բազմած լուռ ու անվրդով

Խորասուզված է նոթբուքի մեջ խոհուն՝



Հազվադեպ կադր՝ Լյովը բոտալկում

Ոտքը ոտքին ու թրաշը քորելով։

Եթե նրան դուք չճանաչեք հանկարծ

Եվ հենց առաջին անգամվանից փորձեք

Գուշակել, թե ինչով է նա ըզբաղված

Հազիվ թե ճիշտ գլխի ընկնել հաջողեք։

Իսկ փաստն այն է, որ նա հաստատ այդ պահին

Դաս չի անում և ոչ էլ հոդված կարդում,

Այլ մի ինչ-որ պարազիտ ուսանողի,

Ինչպես նաև Հրաչի պատվերն անում։

Այդուհանդերձ, եթե ուզենաք շեղել

Այդ մարդուն իր գործից կարևորագույն,

Ապա դա անել դուք կկարողանաք

Տանկ թրաբլի պարտիայով եռագույն։

Բայց այս մարդը նաև պատվերներից զատ

Սիրում է ամեն ձմեռ Հայաստանից

Հարյուր հիսուն ռուսական ռուբլուն մունաթ

Ջահելություն ներկրել ֆիզտեխ նորից։

Մեր հերոսի նախասիրություններից

Չմոռանանք մենք նշել, ահավասիկ,

Արջին, չաղկալին, Հեղնարին, կապ չունի,

Հետապնդելն ու նվիրելն բաունտի։

Այդպիսին է հերոսը մեր խաղիկի,
Միջանցքի շարժման հսկիչը այս անթարթ,
Արտաքինից հիշեցնում է մանյակի,
Քչախոս, շատագործ է, բայց ոչ անդարդ։
18.03.2022

Սարո vs ֆիզկուլտ

Վազեցի տնից սրընթաց,
Երբ ժամին ես նայեցի,
Մի սև տոպրակ ձեռքս բռնած
Արագ-արագ վազեցի։

Հասա ֆիզկուլտի կորպուսին,
Հանդիպեցի մարզիչին,
Կես ծիծաղով ուղարկեց ինձ
Վազել դաշտում՝ սառույցին։

Ես, իհարկե, ավարտելով
Սրահ հետ վերադարձա,
Մարզիչի հրահանգներով
Հանձնարարություն ստացա։

Մարզասարքին ես մոտեցա,
Կիսապառկեցի մեջքիս
Անելու համար «ժիմ լյոժա»՝
Բռնակները ձեռքերիս։

Տղաներից մեկն այնտեղի
Ճիգ թափելս նկատեց
Եվ ինձ բարեկամավարի
Լծակն իջեցնել հուշեց։

Կռացա այդ լծակին ես,
Որ իջեցնեմ այն ձեռքով,
Մարզիչն էլ դեպ ինձ շրջվեց՝
«Սարո՛, ձեռքո՛վ չէ, ոտքո՛վ»։

Ոտքով լծակն իջեցրեցի,
Բռնակներն առաջ եկան,
Վարժությունն անել փորձեցի
Թիակները հետ չեկան։

Ու մինչդեռ ես պայքարում էի
Թիակների դեմ սեղմող
Մարզչի ձայնը լսվեց կրկին
«Սարո՛, ոտքդ արդեն թո՛ղ»։

Այդպես վարժությունս անցավ
Եվ մոտեցա ես ձողին,
Որից ճախարակով կախված
Ուղղանկյուն բեռներ կային։

Նայեցի հպարտորեն ես

Ու տասնըհինգը քսանհինգ
Դարձրի, բայց քիչ էր դա էլ,
Փոխեցի երեսունհինգ։

Եվ նստեցի ես աթոռին
Ու ձողը ցած քաշեցի,
Բայց թեթև էի ես սաստիկ,
Ձողի տեղ վեր թռչեցի։

Արեցի այդ վարժությունը,
Ու դիմեցի մյուս սարքին.
Պետք էր բաց ոտքերով նստել,
Մոտեցնել ոտքը ոտքին։

Տեղավորվեցի հազիվհազ,
Ոտքերս փակել փորձեցի,
Բայց բեռը պարանով կապված
Ծանր էր, չըհաջողեցի։

Շրջվեցի, որ թեթևացնեմ
Բեռը այդ մարզասարքի,
Մեկ էլ գնդասեղը, տեսնեմ,
Պոկվեց միջին իմ ձեռքի։

Հետ կպցրի ես այն նորից
Ու խաղացնել փորձեցի,
Բայց անիծյալ բեռի միջից
Ասեղը չըհանեցի։

Այդ ընթացքում աղջիկ երկու՝
Դեպի իմ կողմ նայելով
Վրաս ծիծաղեցին զողտու՝
Տանջանքներս տեսնելով։

Ես հանձնըվեցի ի վերջո,
Ասեղն հանգիստ թողեցի
Եվ գլուխս կախ ու խելոք
Լուռ ճգնել ըսկսեցի։

Դողալով մի կերպ վերջացրի
Վարժությունն այդ պատուհաս,
Վայրը լքել ես շտապեցի
Հենց ըստացա ես ներկաս։

Այդպիսին էր այդ օրվա իմ
Պարապմունքը ֆիզկուլտի,
Երբ եղա առարկան կրկին
Ուրիշների զավեշտի։

18.03.2022

ԱրսենիՀը, բիվշի Դավոն և լողի մրցումը

Մարտի քսանին երկու հազար
Քսան երկու թվականի
Կազմակերպվեց մի մրցաշար

Ֆիզտեխում՝ լողամարտի։

Ութսունից ավել ուսանող
Ավազանի շուրջ խմբվել,
Վիճակում մեկնարկին սպասող
Հավսար-ըզգաստ էր կանգնել։

Այդ խայտաբղետ ամբոխում
Մի անձ կանաչ գլխարկով,
Եվ մի հոգին էլ կապույտում
Կանգնած էր փրչոտ փորով։

Արսենն էր առաջինը՝
Կանաչ գլխարկը ձեռքին,
Իսկ փրչոտը Դավիթն էր՝
Կանգնած Արսենի կողքին։

Շուտով ազդարարը հնչեց,
Եվ բոլորը ցրվեցին,
Մարզիչն անունները թվեց,
Վեց լողորդներ շարվեցին։

Ջրի աշխույժ ճփճփոցով
Վեց զույգ բազուկ աշխատեց,
Եվ այդ լողամարտը փութով,
Արագորեն ավարտվեց։

Դրան հետևեց հաջորդը,
Մյուս լողամարտն մեկնարկեց,
Ջուրն նետվեցին հաջորդ վեցը,
Եվ դա այդպես շարունակվեց։

Վերջապես ցուցատախտակին
Գրվեց տասնյոթ թիվը,
Երեքն մոտեցան մեկնարկին,
Նրանց մեջն էլ Դավիթը։

Բայց մեկնարկը դեռ չէր տրվել,
Երբ Դավիթն ինքնամոռաց
Ջուրը նետվեց արագորեն՝
Առանց սպասելու նրանց։

Երբ նկատեց նա դա, ջրից
Արագորեն դուրս ցատկեց
Եվ վազելով նա ըշտապով
Հետ եկավ տեղը կանգնեց։

Հետո հնչեց ազդարարը,
Եվ բոլորը միասին
Մի քիչ հետ-առաջ ընկնելով
Ավազանը նետվեցին։

Բախտի բերմամբ, թե պատահմամբ
Մրցակիցներն ուժեղ էին

Եվ երեսունհինգ վայրկյան անց
Հիսուն մետրն անցել էին։

Իսկ Դավիթը այդ ընթացքում
Անտարբեր, անշտապորեն
Ձեռքերըն էր տանում-բերում
Հանգիստ, քմահաճորեն։

«Եկել եմ հանուն ներկայի»
Նրա արդարացումն էր,
Պատճառը ֆիզկուլտուրային
Իր՝ լողին զրանցումն էր։

Մի քանի լողամարտ ևս
Դրանից հետո անցավ,
Անունների փոփոխություն
Բազմիցս էկրանին եղավ։

Մեկնարկին դիմեց Արսենը՝
Կանաչ գլխարկը հագին,
Երբ կարմիրով քսանչորս թիվը
Լուսավորվեց տախտակին։

Լուսատախտակին այդ սակայն
Գրվեց միայն հինգ անուն,
Եվ տեղը Արսենի անվան
Չվառվեց ոչ մի ուղղանկյուն։

Անցավ այս մի մրցալողն էլ,
Տղաներն ավարտեցին,
Մոտեցան մի խումբ աղջիկներ
Եվ մեկնարկին շարվեցին։

Արսենը հարցրեց մարզիչին,
Թե ինչու՞մըն էր բանը,
Ինչու՞ այդ լուսատախտակին
Չգրվեց նրա անունը։

Պարզվեց, որ կազմակերպող
Թիմը այդ անուշադիր
Չէր նկատել անունները
Մի քանիսի և հենց իր։

Եվ վերադարձավ Արսենը
Եվ այդպես էլ չմրցեց,
«Լավն չէր իմ մարզավիճակը»
Ինքն իրեն մխիթարեց։

Այնուհետև մենք լքեցինք
Կորպուսն ավազանի ու
Շուտով բոլորս ցրվեցինք՝
Ամենքն իր գործն անելու։

23.03.2022

Լեգենդներ

Տհեարեёն, Ռուդոլֆ Հիտլերը ու սափրագլուխ շունը

Մայիս տասվեցին տասնհինգ թվի
Առթիվ գիշերվա թանգարանների
Մենք մեր տնով ու Ռուդին էլ առանք,
Էրեբունու Կարմիր բլուր պոկվանք։
Պարսպի վրա ելանք Ռուդն ու ես,
Բարձր խոսելով քայլեցինք այդպես։
Եռում էր խոսքը, չնկատեցինք,
Թե ոնց մի շան գոմռոց լսեցինք։
Մեկ էլ հաչաց էդ շունը մեր վրա.
Ես Ռուդի ձեռը թողի[4] ու թռա։
Ես մտածում էի, թե Ռուդն էլ իմ հետ
Վազում էր պարսպի երկայնքով էդ։
Բարեբախտաբար կամ դժբախտաբար
Շունն հետապնդեց ինձ գազանաբար։
Մեկ էլ ջոգեմ էս շունը ինձ թողեց,
Ու խելագարված Ռուդին հետևեց։
Ու մեկ էլ շրջվեմ ի՞նչ տեսնեմ ես, որ
Լավ լինի. պատի մյուս կողմից անզոր
Ռուդի լեղաճաք ճիչերը հզոր
Հասան ականջիս՝ ոլոր ու մոլոր։
Պատի հետևից Ռուդը դուրս վազեց։
Նա ինձ մոտեցավ ու «փախանք» ասեց։
Վերջը վազեցինք սրընթաց մենք ցած
Պարսպի վրից հոգնած, վախեցած։
Ճամփին Ռուդն ասեց, որ ինքը փախել,
Ու պատից էն կողմ նա վայր էր ընկել։
Շունը եկել էր ու մոտիկացել,
Ու Ռուդը շան վրա էր գոռացել։
Շունը վախեցել, նվվոցով ծլկել
Ու Ռուդը ինձ մոտ էր վերադարձել։
Հետո վազեցինք մենք ճեպասլաց,
Որպես գերեզմանից էինք փախած։
Ու ես շոյելով բեղերս ասացի.
Լավ, էս տողը ես հորինեցի (Ռուդը)։
08.04.2017

Ֆրեշմենիստը

Մութն ընկել է, ուշ է արդեն,
Աչիկներն են մեր փակվում,
Բայց մի մարդ դեռ լուռ ծնկել է
Ամերիկյան ինստիտուտում։

Ծնկել է նա ու լալիս է,
Լալիս վհատ, արտասվաթոր,
Չէ՞ որ ֆրեշմեն անելուն իր
Արդեն քիչ է մնում օր-օր։

Էրեջ է այդ մարդու անունն,
Մարդը ո՞րն է՝ երիտասարդ,
Բայց ճերմակել են մազերը՝

[4] Իրականում վազեցի ու ձեռքից քաշեցի, բայց ձեռքս սահեց ու անջատվեց

Պատճառն իրողությունն է բարդ։

Շուտով կըլլքի նա ՀԱՀը,
Ու կմեկնի նա Չինաստան,
Ախր ի՞նչ Շանհայ, ի՞նչ Պեկին,
Երբ որ այնտեղ չկա ֆրեշման։

Ծնկել է աստիճաններին,
Որտեղ որ դեռ նախորդ օրը
Ծնկել էր ճիշտ նույն կերպ, բայց ժիր
Շարադրում էր իր էսսեյը։

Այդպես անցկացրեց գիշերը՝
Խամրած ձեռքին հակված գլխով,
Տեսիլքներով գեյ ուսուցչի,
Էսսեյների ուրվականով։

Լույսի շողերի գալուն պես
Սրբեց նա իր թաց այտերը,
Դժվարությամբ, բայց և հպարտ՝
Տվեց վերջին հրաժեշտը։

Նա հեռացավ, բայց և այնպես
Չի կոչվելու նա դասալիք,
Այլ իր արած գործոց համար՝
Ֆրեշմենի նվիրյալ մարտիկ։

12.05.2020

Տիեզերё սամուրայը և ԷրՁԺ իմաստակերտը արշավում են

Առավոտյան հինգն անց կես
Զնգաց իմ զարթուցիչը,
Տրորեցի աչքերս,
Նայեցի ես իմ շուրջը։

Բացվում էր լույսը արդեն,
Քանզի ամառ էր դրսում,
Զով էր հաճելիորեն,
Բայց, իհարկե, չէի մրսում։

Վեր կացա ես տեղիցս
Ու մարմինս ձգեցի,
Լվացրեցի երեսս,
Եվ հետո հագնվեցի։

Շտապեցի ավտոտնակ՝
Այգու միջով անցնելով,
Մեկն ու շների ռիմակ
Գնում էին ըզբոսնելով։

Հեծնեցի հեծանիվս
Ու ես առաջ սլացա,
Ետ թողեցի մեր դաշտը
Ու ես փողոց դուրս եկա։

Չէր երևում փողոցում

Ոչ մի ավտոմեքենա,
Աչքս նետեցի հեռուն,
Արագ առաջ ընթացա։

Չէի հեռացել դեռ շատ դեն,
Երբ մի շուն ինձ նկատեց,
Եվ այն կատաղիորեն
Նետվեց ինձ հետապնդեց։

Ընթացքս դանդաղեցրի,
Որ նրան հանգստացնեմ,
Եվ մի կերպ ազատվեցի՝
Նշանակետին հասնեմ։

Սիթիի շրջակայքում
Հեծանիվ եկավ ի հայտ,
Գալիս էր այն, մոտենում,
Երևաց՝ Էրեջն էր այդ։

Ընթանում էր ճոճվելով
Ոլոր-մոլոր նա առաջ,
Ջրափոսերն շրջանցելով
Գալիս էր ինձ ընդառաջ։

Հանդիպեցինք. շատ չանցած
Կրկին մենք շարժվեցինք։
«Ուղղությունը դեպի ցած»
Ընթացքում որոշեցինք։

Զրուցելով վարում էինք
Վեցն էր արդեն այդ պահին,
Բայց Դավիթաշենից մենք
Դուրս չէինք եկել տակավին։

Մերը էր ողջ ճամփան լայն,
Խթանեցինք ոտնակներն,
Թափով առաջ սլացան
Մեր մետաղե նժույգներն։

Գյուղը միջով կտրեցինք
Ու մենք հասանք Հալաբյան,
Կողք կողքի ընթանում էինք,
Ազատ էր ողջ ճամփան լայն։

Ոչ շատ վաղ անձրևել էր,
Ջրափոսեր կային բազում,
Առտըվան թարմություն էր,
Եվ դա մեզ չէր խանգարում։

Դուրեկան էր գլորվելն
Հալաբյանով դեպի ցած,
Հայտնվեց լայն ճակատը
Համալիրի՝ շատ չանցած։

Վեր խոյացանք քաջաբար
Մենք թեքությամբ դեպի վեր,
Գնում էինք դեպի անտառ,
Ստացվում էր, բայց դա հեշտ չէր։

Վերջապես հայտնվեցինք
Գագաթին այդ բլրի,
Երբ որ հաղթահարեցինք
Վերելքները այնտեղի։

Եվ հաճելի էր հետո
Ցած իջնելը այդտեղից՝
Առանց ոտնակ շրջելու,
Քամով՝ փչող դիմացից։

«Դուրեկան էր» հաստատեց
Էրեջն՝ աշխետն սանձելով,
Եվ հետո նա հարցրեց
Ու՞ր ենք գնում այդտեղով։

Այդտեղից մենք դիմեցինք
Դեպի ցածի շրջադարձ,
Անցանք դեմով Դալմայի
Եվ այնտեղ էինք մի քիչ անց։

Իջնում էր ճամփան կրկին՝
Թեքանալով դեպի աջ,
Գնում էինք Հաղթանակի
Կամուրջին մենք ընդառաջ։

Դա էլ կտրեցինք անցանք,
Հասանք Քենդիի այգուն,
Առավոտ էր դեռ սակայն,
Շատրվաններն էին անգույն։

Շրջեցինք այդպես երկար
Կենտրոնում մենք երկուսով,
Միայն երկու հեծանվորդ
Աղջիկ տեսանք դիպվածով։

Օրը բացվում էր սակայն,
Ժամը յոթը կլիներ,
Շատացան առավոտյան
Գործի շտապող ավտոներն։

Մի շների ռիմակ էլ
Անցավ Սայաթ-Նովայով,
Նրանց կտրելով մենք էլ
Գնացինք այդ փողոցով։

Էրեջին համոզեցի
Հետս վերև բարձրանալ
Հաղթանակի զբոսայգի՝
Պլանի գլուխ գնալ։

Ծանր էր մեր ճամփան վեր,
Ոչ այնքան էլ ինձ համար,
Այլ բակերից դուրս չվարած
Էրեջին էր դա դժվար։

Վերջապես հայտնվեցինք
Ազատության փողոցի՝
Մի քիչ վեր խաչմերուկից
Մոտն վերգետնյա կամուրջի։

Չդիմացավ Էրեջը
Եվ կայանել ըստիպեց,
Մի աթոռի թիկնեց և
«Զոհվեցի՛նք» բացականչեց։

Փոքր-ինչ դադրելուց հետո
Մենք կրկին ճամփա ընկանք,
Վերելքըն էր մեզ սպասում
Եվ մենք տոկուն ձևացանք։

Երբ Լամբադային հասանք,
Օրհնելի էր այդ պահը
Էրեջի համար. տանջանքն
Պրծավ՝ իջնում էր մայթը։

Կանգնեցինք սիթիի մոտ՝
Մի բան ուտենք այնտեղից,
Օրն էր բացվել արևոտ,
Սոված էինք առավոտից։

Ես ըսպասեցի դրսում,
Էրեջն մտավ հոգոցով,
Հեծանիվներն էի հսկում,
Երբ եկավ նա տոպրակով։

Կերանք մի-մի կրուասան,
Վերալիցքավորվեցինք,
Հեծնեցինք ամենքս յուրան
Ձիուն ու արշավեցինք։

Գլորվեցինք այդտեղից
Դեպի ցած Կոմիտասով.
Ութն անցել էր շուտվանից,
Լիքն էր փողոցն մարդկանցով։

Հասանք այդպես Վաղարշյան,
Եվ կամուրջին, որտեղից
Շրջադարձին, և միայն
Երկու քայլ էր այդտեղից։

Հոգնել էինք մենք սաստիկ,
Եվ երբ որ երկրորդ թաղի
Այգուն հասանք, բազմեցինք

Հոգնաբեկ մի աթոռի։

Ինն էր ժամն առավոտվա,
Արևն ադեն կիզիչ էր,
Ինքնամոռաց թուլացանք՝
Ճամփան հոգնեցուցիչ էր։

Էրեջը արտաբերեց
«Թե քո հետ էլ ես տեղ գամ»,
Մեր ուղին ծանրը նստեց,
Անկասկած, նրա վրան։

Հետո մի քիչ դինջացանք
Եվ քիչ էլ զրուցեցինք,
Վերջ ի վերջո ուժ գտանք
Եվ մի կերպ տուն գնացինք։
27.03.2022

Էրեջինյաուքսը՝ յուր երիվարին

Դիպվածներ

Քվանտում

Էրոն ղժաց վրեն Արամի,
Արամը կատղեց, տփեց Էրոյին,
Էրոն էլ թռավ դռան հետևին
Ու դուռը փակեց վրեն Արամի։
Արամը ուզեց էդ դուռը բացի,
Բայց Էրոն պահեց դուռը շատ ուժգին,
Արամը տեսավ, որ էլ ճար չունի
Ու տվեց ոտով ջարդեց խեղճ դռին։
Բայց Էրոն դուռը թողել էր արդեն,
Արամը ջարդեց դուռն անմտորեն։
Պարեկը լսեց ճիչը մեր դռան
Ու եկավ շուտ մտավ մեր դասարան։

Գիտնական ճնճղուկը[5]

Մի ճնճղուկ, որ գիտնական էր,
Շատ էր սիրում մտածել,
Ու անվերջ նա աշխատում էր,
Փորձում էր նա գյուտ անել։

Ու նա այժմ տանջվում էր
Մի ծրագրի վրա, որ
Թույլ էր տալիս առանց թևեր
Թռչել տեղեր հեռավոր։

Ու նա արեց այդպիսի գյուտ,
Շատ ուրախ էր դրանից,
Ու սկսեց թռչել այդպես՝
Չօգտվելով թևերից։

Անցավ մի որոշ ժամանակ,
Ու թևերը ճնճղուկի
Թուլացան, որ այդքան երկար
Պարապ մնացած էին։

Ու գլխին տվեց ճնճղուկը,
Որ չէր առել էդ հաշվի,
Երբ փչացավ նրա սարքը՝
Այդ կարճամիտ թռչունի։

Ճանճասպանասպանը

Ճանճը թռավ նստեց թախտին,
Ճանճի փետը իջավ գլխին։
Ճանճը ջոկեց ու վերստին
Թռավ նստեց տեղը իր հին։
Հետապնդումը շարունակվեց
Մինչև ճանճը գլխին կանգնեց
Ճանճասպանի։ Էդ պահին հենց
Ճանճասպանը տարավ-բերեց
Իրա գլխին ինքը տվեց։
Ճանճը ջոկեց ու ճողոպրեց։

---

[5] Վերնագրի հեղինակ՝ Քրիստինե Գրիգորյան

Տանջանք

Նստել եմ ու տանջվում եմ
Մի բան գրել եմ ուզում,
Բայց ուղեղս զուր տանջում եմ
Բառը բառին չի սազում։
Հենց ուզեցի ստեղծագործել
Բլոկ ընկավ միտքը իմ,
Հենց ուզեցի հոգնած քնել՝
Ոտանավոր գործեցիմ։
Միշտ ըտենց ա եղել իմ հետ,
Միշտ եղել եմ սենց անբախտ,
Զոռով չեմ գրել ես տող գեթ,
Մնացել ա կարգն անխախտ։
10.03.2017

Խորհրդավոր եռանկյունը

Նստել եմ ես ու նայում եմ
Եռանկյունուն խնդրի, որ
Լուծումը ես գտնել փորձեմ
Եռանկյունու խորհրդավոր։

Գրքախտ

Երեկ կարդացի գիրք մի,
Ու չգիտեմ, թե հիմի
Ինչ կարդամ ես, որ ինձի
Այն նորից բավարարի։
Գիրքը էդ, որ կարդացի
Ինձ համար շատ հաճելի,
Շատ անհամեմատելի
Ուրիշ գրքի հետ կըլնի։
Ու նեռվայնացա արդեն,
Ամբողջ օրը էս, քանզի
Ես չկարեցա գտնեմ
Գիրք, որ ինձ հետաքրքրի։
31.03.2017

Հրաժեշտ Ռուդին

Ահա էս շաբաթ եկավ շաբաթը,
Հիմա է դրա նախորդ ուրբաթը։
Ռուդի աչքերին սև ա երևում
Ամեն բան՝ երկիր ու թե երկնքում։
Վաղը ժողովը իրանց կլինի
Ու իրանց կաշին էլ կքերթվի։
Ու էդ առթիվ Ռուդն ինձ կկտակի
Իրա բոլոր գրքերն ու նաև մի
Ըշտրիխ, որ ջնջեմ գրքերի միջից
«Ռուդ. Սահակյանի գրադարանից»
Մակագրությունն, ու հինգ հարուր դրամ,
Որ շտրիխն էդ հանկարծ դառնա հաշմանդամ
Նորը առնելու փող ես ունենամ։
16.04.2017

Հակասություն

Ընկեր Սեդրակյանը մի առիթով

Ասեց՝ ձեր խնդիրները մի տվեք

Ուրիշներին, որ ձեր տեղ տանջվելով

Լուծեն ու շատացնեն իրանց խելք։

-Իսկ դուք ըտենց ոչինչ չեք սովորի,

Ու մենք գործ արած կըլնենք հավայի,

Ու մարդիկ փաստորեն կզարմանան,

Քանի որ կգանք մենք հակասության։

Զանազան

Խոկմունք

Հոգով դառնացած, մթագնած մտքով

Քայլում եմ աշնան թախծոտ այգիով։

Մտքեր են գալիս ու գնում անվերջ,

Չեմ գտնում ես ինձ տիեզերքի մեջ։

Մտքեր են գալիս՝ կպչում ու մնում,

Մտքեր կան՝ օրով հանգիստ չեն թողնում։

Խորհում եմ անդորր դաշնության մասին

Ու պատերազմի ավերի մասին,

Ու մի ուժաթափ կսկիծ է իջնում

Վիրավոր սրտիս, մոլեգին հոգուս։

Ու կաշկանդվում է միտքս խելագար

Ու տանջվում, մաշվում մտքերից մոլար։

Սուզվում է միտքս ճահճում խոհերի

Անթիվ ու բազում որոգայթների։

Գոռում են ճիչերն փլատակների

Երբեմնի մանուկ, պարզ ու ջինջ մտքիս։

Ու այն տվայտանքն չարաբաստիկ,

Որ պատել է ինձ ու ավեր մտքիս,

Չի անցնում, այլ դեռ ավելի սաստիկ

Գրոհում է այն որպես չար պատիժ։

21.04.2015

Պարադոքս

Երբ մտածում ես,

Որ չես մտածում,

Դու մտածում ես

Ու չես գիտակցում,

Որ մտածում ես։

Ու պարադոքս է

Դառնում փաստորեն,

Որ չես մտածում,

Բայց մտածում ես,

Որ չես մտածում։